մի շարք յօդուածներ իրար յաջորդում են իշխանութեան կազմակերպութեան, հարկերի ու տուրքերի, ռազմական, միջազգային, դատական եւ այլ օրէնքների մասին, սակայն այդ կարգը չէ թէ հետեւողականօրէն, այլ ընդհակառակը, շատ անփոյթ է պահուած ընդհանրապէս:

Սովորական երեւոյթ է, որ նիւթը դեռ եւս չամբողջացած, յանկարծ յօդուածաշարքն ընդհատում է բոլորովին այլ բովանդակութեամբ յօդուածով կամ յօդուածներով, նախորդի շարունակութիւնը պահելով դրքի վերջում կամ մի այլ պատահական տեղում դետեղելու համար:

Ահա ձեզ միայն մի օրինակ, որը — կարծում ենք — միանգամայն բաւական է մեր ասածն ապացուցելու համար: Ազատագ Հայաստանի երեւմուտքն ու հաշուեկշիռը փոխանակ միայն մէկ գլուխ կամ մէկ յօդուած լինելու եւ կամ եթէ երեք յօդուած, յամենայն դէպս անպայմանօրէն իրար յաջորդող երեք յօդուած, այո՛, երեք յօդուած են, սակայն մէկը միւսից բաժանուած եւ հեռու ձգուած: Այսպէս, ելքի յօդուածն է թիւ 278, մուտքինը՝ 519, իսկ հաշուեկշիռինը՝ թիւ 520:

Ցեղոյ լուրջ եւ պետական առաջնակարգ նշանակութիւն ունեցող օրէնքների կողքին դուք յաճախ դտնում էք այնպիսի անկարեւոր ու միամիտ օրէնքներ, որոնք կամ շատ մանր, երկրորդական եւ ըստ ինքեան հասկանալի լինելով, կարող էին ամենեւին մէջտեղ չբերուել եւ դրանից դրուածքը ոչինչ չէր կորցնի. օրինակ, «Գիշերապահ զինուորը, եթէ իր պաշտօնի միջոցին քնի, կը պատժուի» (նձէ)1): Կամ՝ «Եթէ երկու մարդ կամ կին իրար հետ կռուում են բարկացած, ոչ ոք նրանցից մէկին ու մէկի կողմը չբռնի, այլ քաղցր խօսքերով աշխատի հանդստացնել նրանց» (ճձէ): Կամ՝ «Իրաքանչիւր իշխանաւոր կարող է բարի գործել, իսկ չար — ո՛չ» (ճճբ):

Այս բոլորի հետեւանքով՝ դիրքը ձեզ վրայ թողնում է այն տպաւորութիւնը, որ հեղինակը որեւէ համակարգութեան չի հետեւել, այլ ցաք ու ցրիւ արձանագրել է այն ամէնը, ինչ որ քաղել է ուրիշ աղբիւրներից եւ կամ մտածել ու յիշել է պատահաբար:

Այդ հանդամանքը մի կողմից՝ չափազանց դժուարացնում է դրքի ուսումնասիրութիւնը, իսկ միւս կողմից՝ խանգարում է ընթերցողին դիւրութեամբ հետեւելու հեղինակի մտքերին եւ նրա առաջարկած օրէնքների ներքին կամ տրամաբանական կապակցութեանը:

Բայց եւ այնպէս փորձենք ընդհանուր գծերով ներկայացնել, թէ հեղինակը ի՛նչպէս է իրեն պատկերացնում ապագայ ազատ Հայաստանի պետական կազմակերպութիւնը եւ ի՛նչ օրէնքներ է առաջարկում նրա կառավարութեան համար:

ԵՐԿԻՐԸ ԵՒ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

Շահամիրեանի Հայաստանը պատմական Հայաստանն է, իր ամենաընդարձակ սահմաններով — Սեւ կամ Պոնտական ծովից մինչեւ Կասպից ծովը եւ Ալանաց դռներից մինչեւ Միջերկրական ծովը, մէջն առած նաեւ Կիլիկիան եւ Երբորդ Հայքը:

Այս ամբողջ երկիրը իր «լերամբ, բլրամբ, անտառիւք, ծովաւ, լճակաւ, գետաւ, աղբիւրօք, քաղաքաւ, դաւառաւ, դաշտիւք, դիւղօրէկիւք, բնակութենօք եւ զամենայն զոր ինչ ի յերեսս յերկրիս եւ խորս ծովու եւ յեղումն գետոցէկից, աղբերաց, թէ բնութիւն մարդոյ, եթէ անասուն, կենդանեօք, դազանօք, սողնօք, թռչնօք, եւ բոլոր երկիր ամենայն կենդանեօք, արուք եւ բերիւք, անտառիւք կացցէ եւ մնասցէ երկիրն անուամբ Հայաստան եւ ի միջի նորա բնակողք ի բնութենէ մարդոյ Հայք» (ա):

Հայաստանը այդ սահմաններով կազմում է «Հայ ազգի ժառանգութիւնը»: «Հայոց պետութիւնը պահպանուում է այդ հողի վրայ իր սեփական օրէնքներով, մինչեւ յաւիտեան եւ այդ երկրից մի քայլ ոչ պիտի պակասի, ոչ էլ աւելանայ» (ա):

Շահամիրեանի Հայաստանում այլեւս չկան նախարարական ու իշխանական տներ, որոնք հնում, մրողջ երկիրն իրենց մէջ բաժանած, հանդիսանում էին նրա լիազօր սեփականատէրերը: Երկրի միակ դերիշխան տէրը այժմ ինքը հայ ժողովուրդն է, որ իր կամքն

1) Փակագծերի մէջ առնուած հայկական թուանշանները ցոյց են տալիս յօդուածների թիւերը: